

231

524











ՊՐՈԼԵՏԱՆՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՆՐԻ, ՄԻԱՅԵ՛Ք.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Հ.Ս.Խ.Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՍԵՐԻԱ № 31.

---

---

Ռ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

# ԵՎՈԼՅՈՒՑԻՑԻՈՆ ԹԵՈՐԻԱ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐ

ՀԱՄԱՌՈՏ ՔԱՐՏԵԶՈՎ

---

---

ՅԵՐԵՎԱՆ — 1927

ՊԵՏ. - Համալսարանի տպակետիպ № 7.



\* ԳՐԱՏԱՐԱԿԱԿՈՒՅՈՒՄ ԻՎԱՆՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՄԱԿԱՆՐԱՆԻ

Մ. ԳԱԳՐԻԵԼՅԱՆ

# ԵՂՎՅՈՒՅԻՆ

## ՔՈՐԴԱ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ  
ԵԿԱԴՐՆԵՐ ԵՄԻՄ.  
ԱՌՏ ԱՆՔԱՆՈՎ



15724 A III  
3021

ՅՅՑԴ . ՅԵՐԵՎԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳԱՄԱԿԱՆՐԱՆԻ ԱՊԱԿՍԻԳ




RECEIVED

NOV 19 1954

LIBRARY

UNIVERSITY OF TORONTO



UNIVERSITY OF TORONTO  
LIBRARY  
128 St. George Street  
Toronto, Ontario



UNIVERSITY OF TORONTO  
LIBRARY



ԵՎՈՂՈՒՑԻՈՆ ԹԵՈՐԻԱ.

ՀԱՄԱՌՈՑ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.

Եվոլուցիոն թեորիայի հիմնական միտքն է, վոր բնութայան մեջ հայտան, անփոփոխ բան չկա, ամեն ինչ յենթակա յե մշտնջենական, անընդհատ վարգայման: Եվոլուցիան - հիմնական յերևույթ է ամբողջ բնութայան մեջ: Եվոլուցիայի արդյունք են մեր Յերկիրը. նրա հարևան մոլորակները: Յերկիրն իր սառման մոմենտից եվոլուցիայի շնորհիվ փոփոխութայունների յե յենթարկվել, փոխվել է նրա մակերևույթի տեսքը և այսուհետև ել պիտի փոփոխվի: Եվոլուցիայի արդյունք է և կյանքը, վոր վարգայել է անկենդան նյութից, ապա նույն եվոլուցիայի շնորհիվ սկզբնական կյանքը միլիոնավոր տարիներ փոփոխութայուններ կրելով՝ տալիս է ամբողջ որգանական աշխարհը:

Դարվիներ վերջնականապես հիմնավորեց որգանական եվոլուցիայի գաղափարը: Ասկայն Դարվիներ չեր առաջինը, վոր խոսեց եվոլուցիայի մասին. նրանից առաջ ել կային եվոլուցիոն թեորիայի կողմնակիցներ.

Եվոլուցիա - նշանակում է վարգայում: Եվոլուցիայի սկզբունքը յերկու տեսակ կարելի յե հասկանալ. 1. վորպես աստիճանական, հաջորդական եվոլուցիա, պարսից դեպի բարդը, ստորին ձևից դեպի բարձր և միաժամանակ շտեմնել կապալկապալու հաջորդականութայուն.

մեկը (բարդը) մյուսից (պարզ) հետո են զարգացել, իրա-  
րից անկախ և վոչ մեկը մյուսից. 2. Եվոլուցիա՝ կա-  
պակից հաջորդականությամբ (преемственная), այս տե-  
սակետով՝ որգանիցմները զարգացել են աստիճանական,  
հաջորդական կարգով մեկը մյուսից, որգանիցմների  
միջև շեշտվում է ազգակցական կապը:

Գիտության համար արժեք ունի յերկրորդ տեսակետը:

### ՔԻՆ ԴԱՐ:

Ակսաճ հին դարերից, մարդկությանը հետաքրքրվում  
էր այն հարցով, թե ինչպես են առաջ յեկել որգա-  
նիցմները, առաջին որգանիցմը, մարդը:

ՋԵՐԱԿԼԻՏԵՍԸ (535-475) շեշտում էր եվոլուցիոնիզմի  
սկզբունքը: «Ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոփոխվում»  
— ահա նրա հիմնական միտքը: Բնության մեջ ամեն ինչ  
յենթակա յե փոփոխության:

ԵՄՊԵՐՈՎԼ (495-435), բանաստեղծ, յերաժիշտ և բնագետ:  
Աս կողմնակից էր աբիոգենեզի (կյանքն՝ անկենդան  
չյութից): Առաջադրում է մի թեորիա, վորով պանկա-  
նում է լուսաբանել որգանիցմների եվոլուցիան: Համա-  
ձայն այդ թեորիայի. բնության մեջ տիրապետում են  
չորս հիմնական տարրերքներ՝ կրակ, հող, ոդ, ջուր, վո-  
րոնք շեկավարվում են յերկու ուժերով՝ սիբուլ և ասե.  
լուխամբ (միացնող և յետ մշող ուժեր): Կենդանիները  
գոյանում են մաս-մաս՝ առանձին գլուխներ, ձեռքեր,

ձեռքեր և այլն: Մասերը կամ միանում են (օրինակ սիրո  
ուժն է գերակշռում), կամ խուսափում իրարից (ատենու-  
թյան գերակշռության դեպքում): Միացման ժամանակ  
գոյանում են այլանդակ ձևեր (որինակ՝ կովը շան  
գլխով, ձին մի այլ կենդանու վոտքերով և այլն): Այլան-  
դակ ձևերի մեջ սկսվում է գոյության կռիվ: Պատկան-  
վում են ավելի նորմալ միացումները (նոր որգանիչ-  
մներ, վորոնց բնութայունն ընտրում է), այլանդակ ձևերը  
վոչնչանում են:

ԵՄՊԵՐՈՎԸ հասկանում էր եվոլուցիան վորպես հա-  
ջորդական, աստիճանական (պարզից դեպի բարդը), վոչ-  
կապակցական պարգայում. որգանիչմների միջև չէր  
տեսնում փոխադարձ ազդակցություն:

### ԱՐԻՍՏՈՏԵԼ (384-322)

Արիստոտելն ընդունում է, վոր որգանական աշխարհը  
հաջորդաբար է պարգայել նախ բուսական, ապա կենդա-  
նական աշխարհը և վերջը մարդը, բայց այդ աշխարհ-  
ները, նրա կարծիքով իրար հետ ազդակցաբար կապված  
չեն: Որգանիչմներն աբիոգենեզով են պարգայել ան-  
կենդան նյութից (իրարից անկախ): Բույսը նման չէ ան-  
կենդան մարմնին, վորովհետև նա սնվում և բազմա-  
նում է, սակայն համեմատաբար կենդանու հետ բույսն  
անշունչ է և վորկ պգացողությունից (ապա ուրեմն  
վոչ մի ազդակցություն կենդանու և բույսի միջև):

Մարդն էլ առանձնահատուկ որգանիչմ է. նա ամենա-

կատարյալ ձևն է, ուղղահայաց դիրք և մաքուր արյուն  
ունի, ուղեղը մեծ, մարմնի ջերմությանը ել բարձր:  
Ամեն ինչ բնության մեջ մարդու համար է ստեղծ-  
ված: Որգանական աշխարհն աստիճանաբար է առաջ  
յեկել, նախ պարզ, հետո բարդ ձևերը:

Ֆնադարյան գիտնականների թեորիաների, հին դարի՝  
այս կամ այն բնական յերևույթը պարզաբանող՝ մտքե-  
րի, գաղափարների մասին, վոտանավորներով մանրամասն  
խոսում է բանաստեղծ ԼՈՒԿՐԵՑԻՈՍ ԿԱՐԸ (98-55 )  
իր «Իրերի բնություն» պոեմայում:

#### ՄԻՋԻՆ ԴԱՐ:

Միջին դարը գիտության համար համարյա թե կո-  
րած ժամանակ էր: Տիրապետում էր յեկեղեցին, վո-  
րի ազդեցության ներքո էին և գիտական թեո-  
րիաները: Բայց եվոլյուցիայի սկզբունքն ըստ յերևույ-  
թին չէր մոռացված: Այդ ժամանակվա գիտնական՝ ալ-  
քիմիկոսներն աբիոգենեսն իրականացնելու փորձեր էին  
անում, անկենդան նյութներից ձգնում էին որգանիչ-  
մներ ստանալ (նույնիսկ մարդ. «հոմունկուլուս»-մար-  
դուկ ստանալու փորձերը): Նույն ալքիմիկոսները փոր-  
ձում էին վորոշ քիմիական նյութերից վոսկի ստանալ.  
ըստ յերևույթին յենթադրում էին, թե յեղած քիմիա-  
կան տարրերն ազգակից են և եվոլյուցիայի, փոխա-  
կերպման արդյունք:

ՆՈՐ ԴԱՐ .

Ֆակտեվոլուպիոնիստներ:

ԿԱՐԼ ԼԻՆՆԵ (շվեդացի բուսաբան . 1707 - 1779).

Լիննեն գիտականորեն մշակեց որգանիզմների կարգաբանությունը (դասակարգություն , классификация):

Որգանական աշխարհը բաժանեց մի շարք խմբավորումների՝ մեծ ու փոքր. նրա շնորհիվ սեշտացավ որգանական աշխարհի ուսումնասիրությունը:

Մինչև Լիննեն որգանական կարգաբանությունն անտիկառենդի նման էր կազմած . խմբավորումները դասվում էին մեկը մյուսի յետևից (Բոննեյի կարգաբանությունը): Լիննեյի կարգաբանությունը նառանման էր. նրա միավորներն էին . դառ , վոր բաժանվում է զարգերի , կարգը - սեռերի , սեռը - տեսակների , տեսակը - այլաձևություններին : Լիննեն կարգաբանության մեջ մտցրեց նրկաակի անվանակոչությունը: Ամեն մի որգանիզմին տալիս է յերկու անուն՝ սեռի և տեսակի: Պարզեք որինակով . զարգաասուններին դասը բաժանվում է մի շարք կարգերի , վորոնցից մեկն է , որինակ՝ գիշատիչների կարգը . այս կարգն էլ իր սերթին բաժանվում է մի քանի սեռերի , որինակ՝ զատուներին , շներին : Կատուներից են մի քանի տեսակներ , ինչպես՝ ընտանի զատու , առյուծ , վագր և այլն : Կատուների սեռը գիտական տերմինորոգիայով կոչվում է - Felidae (Ֆելիդե) , ապա յուրա-

քանչյուր տեսակ՝ *Felis leo* (Տելիս լեո - առյուծ), *Felis tigris* (Տելիս տիգրիս - վագր):

Նետագայում, 1780 թվ. ԲԱՐՇԷԼ կարգաբանության մեջ մտցնում է և մի նոր միավոր, այն է՝ ընտանեկը (սեռի և կարգի միջև), վորը պահպանված է այժմյան կարգաբանության մեջ:

Խմբավորումներ կազմելիս՝ Լիննեն գլխավորապես հիմնվում էր որգանիվմների արտաքին կառուցվածքի վրա: Դա նրա կարգաբանության բացասական կողմն էր: Կան որգանիվմներ, վորոնք թեև արտաքուստ նման են, բայց տարբեր կենդանիներ են (որինակ՝ կետ և ձուկ):

Լիննեն կողմնակից չէր որգանիվմների ազգակցության: Խմբավորման մեջ յեչած որգանիվմներն իրար ազգակից չեն: Լիննեն ասում էր. «գոյություն ունեն այնքան որգանական ձևեր, վորքան վոյգ սկզբից ստեղծել էր արարիչը:» Մարդուն ևս նա կապիկների հետ միացնում է մեկ միավորի մեջ (անտրոպոմորֆե կոչված), սակայն դրանով ամենևին չէր ուզում շեղտել նրանց ազգակցությունը:

Լիննեյի կարգաբանությունը, ընայած նրա վորոշ թերություններին, ավելի յևս նպաստեց (Տակառակ Լիննեյի Տակտեվոլուցիոն (Չիտական մտքով<sup>\*)</sup> գաղափարների) էվոլուցիոն թեորիային: Նա, թեև արտաքուստ նմանող որգա-

<sup>\*)</sup> այսինքն՝ չէր ընդունում կապակցական էվոլուցիա.

նիւմներին խմբավորեց միավորների մեջ, քայքայեց հետո .  
գայում եվոլուցիոնիստները քննելով միավորները՝ կարողացան պարզել որգանիւմների և ներքին կառուցվածքի նմանութիւնը, ապա դրանով իհարկե շեշտվեց նրանց ալգակցութիւնը:

Նույն Էիննեն ասում էր, թէ նոր տեսակներ կարող են առաջ գալ և տարբեր ձևերի կուգավորութիւնից:

ԿՅՈՒՎԻԵ : 1768 - 1832

Կյուվիեն ֆրանսիացի կենդանաբան և հնէաբան էր (պալեոնտոլոգ): Նա գիտական բնույթ տվեց մատչաւ հնէաբանութեան: Վերջնականապէս հաստատեց, թէ յերկրակեղևի շերտերում գտնված բրածոներն իսկական, յերբեմնի գոյութիւն ունեցող որգանիւմների մնացորդներ են: Նայած բրածոներին բնականորեն առաջ է գալիս այն միտքը, թէ առաջներում այլ ձևերի որգանիւմներ էին ապրում, ապա ուրեմն այս յերևույթը ճշտում է եվոլուցիոն թեորիայի հիմնական սկզբունքը՝ փոփոխականութիւնը: Սակայն Կյուվիեն դեմ էր որգանիւմների ալգակցութեան, նրանք իրարից անկախ են առաջ յեկել: Կյուվիեն առաջադրում է «կատաստրոֆների (հեղաշրջումների) թեորիան», համաձայն վորի յերկրի վրա յեղել են կատաստրոֆներ, յերբ այս կամ այն վայրում վոջնչացման է յենթարկվել ամբողջ որգանական աշխարհը, յերկրի մակերևույթն

ել փոփոխութեան յենթարկվել: Յերկիրը մի քանի կատաստրոֆներ ե ապրել. ամեն մի կատաստրոֆից Տետո վորոշ տեղերում որգանական աշխարհը նորից ե հայտնվել (ստեղծվել. ըստ Դորբինի՝ Նյուվիեի Յայրասեղ կողմնակից — 27 կատաստրոֆա յե յեղել, նոյնքան ել ստեղծագործութիւն): Տարբեր յերկրաբանական դարաշրջանների որգանիւմների մեջ չկա ազգակցութիւն, նրանք իրարից անկախ են առաջ յեկել և ամեն անգամ ավելի նոր ու բարդ ձևեր, իսկ վերջին դարաշրջանում հայտնվել ե մարդը:

### ԵՎՈԼՈՒՑԻՈՆԻՍՏՆԵՐ.

ԲՅՈՒՖՈՒ. 1707 - 1788.

Բյուֆֆոն շեշտում ե որգանիւմների փոփոխականութիւնը: նրա կարծիքով որգանիւմը Տեշտութեամբ կարող ե կորցնել այս կամ այն սկզբնական հատկանիշը, փոփոխվել և նոր հատկանիշներ ձեռք բերել: Կորքան շատ նոր հատկանիշներ պարգանան, այնքան ավելի կփոփոխվի որգանիւմը և վորոշ ժամանակից Տետո առաջ կգա բոլորովին նոր տեսակ: Փոփոխականութեանը նպաստում են շրջապատ ընդհանրութիւնը, կլիմայական փոփոխութիւնը, որգանիւմները փոփոխվում են արտաքին բնական պայմանների անմիջական ազդեցութեամբ: Կապիկն այլաստեղծված մարդ ե: Սակայն մարդու ծագման հարցում

Բյուճիոն զիջում է վոչ գիտական տեսակետին . մարդը նրա  
կարծիքով նման չէ կենդանիներին , վորովհետև նա  
հեշտութայամբ ընտելանում է բոլոր կլիմաներին և ըն-  
դունակ է համակերպվելու տարբեր պայմաններին :  
Այս միտքն ակամա զիջումն կարելի յե համարել ժամա-  
նակին : Չպիտի մոռանալ , վոր նոր դարում գերիշխում  
եր հակաեվոլուցիոն հոսանքը , վորին հովանավորում  
ենին յեկեղեցին և պետութայունը :

ԵՐԱԶՄ ԳԱՐՎԻՆ . ՅՆ . 1731 .

Զգույշ եր և Դարվինի պապ՝ Երազմ Դարվինը :  
Եվոլուցիոն թեորիայի մասին , որինակ , նա արտահայտվում  
է և իր „ Բնութայան տաճար " պոեմայում : Էնդունելով եվո-  
լուցիայի սկզբունքը՝ փորձում է դրա պատճառները  
պարզաբանել : Կողմնակից է աբիոգենեզի ( նույնիսկ  
արծիվը , առյուծը , ոձը – անկենդան նյութից են զարգա-  
յել ) : Առաջին կյանքն սկզբնական կենսաթելերից է  
առաջ յեկել : Պոեմայում խոսում է գոյութայան կռվի ,  
բնական , նույնիսկ սեռազան ընտրութայան մասին .  
Բայց և այնպես չի մոռանում փառաբանել աստծուն  
իր արարչագործութայունների համար . իհարկե անկեղծ  
համոզմունքից դրդված չեր այդ անում :

ԳԵՈՂԵ 1749 – 1832 .

Համարձակ և համոզված եվոլուցիոնիստ եր բանա-

ստեղծ և ուրիշ գանգ Գեորգեն: Ամենուրեք նա եվոլուցիայի սկզբունքն էր տեսնում: Բոլոր ոգանիվմներն սկզբնական նախատիպարի սլանով են կառուցված, որգանիվմներն եվոլուցիայի արդյունք են. եվոլուցիայի շնորհիվ առաջ են յեկել բազմատեսակ ձևեր: Ամեն մի որգանիվմ, իր մարմնի սահմաններում, նույնպես մարմնային հիմնական մի մասի վարգայման արդյունք է: Բուսական աշխարհում բոլոր ձևերը մի հիմնական մասի, այն է՝ տերևի ձևափոխության արդյունք են: Ցաղկի բոլոր մասերը՝ առեջքը, վարսանդը, պսակաթերթիկներն և բաժակաթերթիկները նույնպես տերևի վարգայման, ձևափոխության արդյունք են (այդ ապացուցվում է որինակ՝ ջրաշուշանի վրա. նկատելի յե, ինչպես նրա պսակաթերթիկներից աստիճանաբար գալիս է առեջքը):

Ըստ Գեորգեյի՝ մարդն էլ կենդանական ծագում ունի: Նա գտավ մարդու գանգի վրա, վերին ծնոտում՝ միջծնոտային վոսկրներ (վորոնք սովորաբար չեն լինում). այդ վոսկրները բնորոշ են և կան մի շարք վոզնաշարավոր կենդանիների ծնոտների վրա (որինակ՝ կրծողների):

ԺԱՆ ԼԱՄԱՐԿ. 1744 - 1829.

Լամարկը մինչդարձիցյան շրջանի ամենաազգի ընկնող եվոլուցիոնիստն էր: Վերամշակեց կենդանաբանական կարգաբանությունը, մտցրեց «անվոզնաշարավոր» անվանակոչությունը (մինչ նրան անվոզնաշարա-

վորները կրում են «վորներ» անունը):

Կարգաբանական միավորները, նրա կարծիքով, մարդկանց մտահայեցողության արդյունք են, բնության մեջ դժվար է կտրուկ կերպով իրարից բաժանել որգանական միավորները (տեսակ, սեռ և այլն). բոլորի միջև կան միջակա ձևեր: Որգանական աշխարհը — եվոլուցիայի արդյունք է. որգանական ձևերն ազգակցաբար իրար կապված են: Բազմաձևության, փոփոխականության պատճառներն են — շրջապատի կլիմայական և այլ բնական պայմանները: Փոփոխականությանը նպաստել է նաև որգանիզմների գործարանների վարժությունը կամ վոչվարժությունը (գործաճությունը կամ անգործաճությունը): Յեթե վոր է գործարան շատ և հաճախ է վարժվում (գործաճվում), նա կարգանում է, փոփոխվում. փոփոխված հատկանիշը ժառանգաբար փոխանցվում է հետագա սերնդին. սա յեւ շարունակում է վարժեցնել այդ գործարանը և այդպես սերնդե սերունդ մի գործարան այնքան է փոփոխվում, վոր այլևս նման չէ իր սկզբնական դրության: Բերե՞ք որինակներ. վարժության շնորհիվ կարգացել են. ընձուխտի յերկար վիզը, նոյն և կարապի, բադի (լողացող թռչունների) մատների լողաթաղանթները, փայտփորի, մրջնակերի յերկար լեզուն, սմբակավորների սմբակները, կենդանիների յեղջյուրները. վոչվարժության հետևանք<sup>են</sup> իլուրդի աննշան աչքերը, վորոնք

Տեստագարձ վարձապահան վրա յեն , կոյր մկան (с.пе-  
нец), քարայրերի մի շարք կենդանիների աչքեր  
չունենալը:

Համարկն առաջադրում է մի անբնական գործոն,  
վորն է որգանիվմի գիշտակցութայունը: Տոգեկան  
յերևույթներն ել նպաստում են այս կամ այն գոր-  
ծարանի վարձապահան , փոփոխութայան : Այսպես է պատ-  
կերացնում նրա դերը շրջապատ պայմանները վորոշ  
կարիքներ են առաջ բերում , կենդանին գիշտակցում  
է այդ և իր ամբողջ միտքն ուղղում է այն գործա-  
րանի վրա , վորի անճեստացումը կամ ուժեղ վարձանալը  
կենսապես անհրաժեշտ է . նա սկսում է վարժեցնել  
գործարանը , վարժութայունը սովորութայունն է դառնում ,  
սովորութայունը ժառանգաբար սերնդն սերունդ փոխանց-  
վում է և ավելի ու ավելի վարձանում : Մի խոսքով  
վորոշ դեր է կատարում ինչ վոր «նեթրդին վգացում»:  
Ասկայն բոյսերի և ստորին կենդանիների (ուղեղ  
չունեցող) մեջ Համարկը «նեթրդին վգացման» ուժը  
չի տեսնում . սրանց նոր հատկանիշները «Տայտնվում»  
են , թե ինչպես - մնում է անհայտ : Հստ յերևույթին  
նա ընդունում է , վոր փոփոխվելու հատկութայունն ի  
բնե կա որգանիվմի մեջ:

Մարդն ել կենդանական ճագում ունի : Համարկը  
մանրամասն գծում է , թե ինչպես չորքոտանի (չորք-  
ձեռնանի) որգանիվմից վարձապել է մարդը:

Ժամանակի ազդեցությունը նկատելի յե և այդ խո-  
շոր, համոզված եզրույնի տնտեսի վրա: Իր „Կենդա-  
նաբանության փիլիսոփայություն“ գրքում մի քանի  
խոսքերով, բոլորովին անտեղի մեջ ե քերում և արար-  
չի նշանակությունը. իհարկե Համարկի պես գիտնա-  
կան անկեղծորեն այդ բանն անել չեր կարող:

Համարկի հիմնական մտքերն են. որգանիվմները  
փոփոխական են, իրար ազգակից. փոփոխականու-  
թյան նպաստում են — գործարանների վարժությունը  
կամ վոչվարժությունը, արտաքին բնական պայմաննե-  
րի ներգործությունը, գրանից առաջ յեկան ստացա-  
կան հատկանիշների ժառանգական փոխանցումը,  
„ներքին պայմանը“:

Այժմ Համարկի ուսմունքը նորից բեմ են հանում  
նոր լամարկիստները (նեոլամարկիստներ), վորոնք յերկու  
հոսանքի յեն բաժանված. 1. վիտալիստական թեքու-  
մով — ընդունում են „ներքին պայման, ուժի, գիտակե-  
ցության“ դերը, 2. մատերիալիստական՝ առաջինը  
ժխտելով՝ շեշտում են վարժության կամ վոչվարժու-  
թյան նշանակությունը, արտաքին պայմանների անմի-  
ջական ներգործությունը, ստացական հատկանիշնե-  
րի ժառանգական փոխանցումը:

ՉԱՐԼՁ ԴԱՐՎԻՆ . 1809 - 1889.

Դարվինով սկսվում է նոր դար վոչ միայն բնագիտության, այլ և ժողովրդ առհասարակ գիտության բնագավառում: Դարվինի „Տեսականների ջագում“ գրքի լույս տեսնելուց հետո (1859թ.) գիտնականների մեջ մասնացնում է եվոլուցիոն թեորիայի կոչմը. վերջնականապես հաստատվում և ընդունվում, վոր որգանիչմները վոչ թե ստեղծվել են իրարից անկախ, այլ զարգացել են մեկը մյուսից և բոլոր որգանիչմներն էլ ազգակցաբար կապված են: Դարվինը պարզաբանում է զարգացման, փոփոխականության պատճառները: Նրա թեորիայի հիմնական որենքներն են՝ բնական ընտրություն (վորպես հետևանք գոյության կռվի), սեռական ընտրություն: Հնտանի կենդանիների և ալնվացրած բույսերի բազմաձևությունը բացատրում է արհեստական ընտրությամբ: Որգանիչմների եվոլուցիան նա ապացուցում է բազմաթիվ փաստերով՝ սաղմնաբանական, հնեաբանական, աշխարհագրական. համեմատական անատոմիան էլ գալիս է ապացուցելու եվոլուցիայի սկզբունքը (ռուդիմենտար գործարաններ, ատավիստական նշաններ): Դարվինը 1871թ. հրատարակում է „Մարդու ջագումը և սեռական ընտրություն“ գիրքը. վորով վերջնականապես ապացուցում է մարդու կենդանական բնույթը և ջագումը:

Դարվիճի կենսագրութեան և թեորիայի մասին կարգալ.

1. Ռ. Գաբրիելյան. Զարլի Դարվիճ .

2. ԲԱԼԱԿՅԱՆ. Դարվիճի սմ.

Եվոլուցիոն թեորիայի համառոտ պատմական  
ակնարկ . «ՆՈՐ ՀՈՍԱՆՔ» ամսագիր, Տփլիս,  
1913 թ. N 4, 5, 6-7 . Գաբրիելյանի հոդվածում  
(«Մարդու ծագման հարսի պարզապումր»):

\*\*\*

Նյութեր ալելի մանրամասն ծանոթանալու համար:

1. Коршиков. — Эволюционные теории.

2. Филиппченко. — Эволюционные идеи в биологии.

3. СЕККЕЛЬ . — Естественная история мироздания. ч. I

4. ДЕЛАЖ и ГОЛЬДСМИТ. — Теория эволюции.

5. ПЕРЬЕ. — Основные идеи развития зоологии.

6. ВЕЙСМАН. — Лекции по эволюцион. теории.

7. ЭРАЗМ ДАРВИН. — Храм природы.

8. ЛУКРЕЦИЙ КАВ. — О природе вещей.

9. ОСБОРН. — От греков до Дарвина (Холодковский.  
Биологич. очерки - фрэнկ) :

Դարվիճի կենսագրութեան .

10. ЭНГЕЛЬГАРД . — Чарлз Дарвин.

11. ГРАНТ-АРРЕН. — Чарлз Дарвин.

12. Ч. ДАРВИН. Автобиография

Պարզիկի թեորիայի ճանիչ:

13. ФЕРЬЕР .- Дарвинизм. (Կա նաև ընդհանուր և բնագիտական թեորիա):
14. ГЕССЕ .- Учение о происхождении видов и дарвинизм.
15. ЕЛЯЧИЧ .- Происхождение видов.
16. ТИМИРЯЗЕВ .- Чарльз Дарвин и его теория.
17. РОМАНЕС .- Теория Ч. Дарвина
18. СИНИЦЫН .- Лекции по эволюцион. теории. ч. 2
19. ЧУЛОК .- Теория Дарвина .
20. ДАРВИН .- Происхождение видов .

Մարդու ծագման ճանիչ.


21. ЯНУЧИН .- Происхождение человека.
22. ЖУКОВ .- Происхождение человека
23. ЛЕХЕ .- Происхождение человека.
24. БЕРШЕ .- Происхождение человека
25. ВИШНЕВСКИЙ .- Происхождение человека и древность человека.
26. Ч. ДАРВИН .- Происхождение человека и половой отбор.
27. ЦЕПЕ .- Մարդու և կենդանիների ծագումը.
28. БЕТТ .- Մարդու ծագումը.
29. П. Ф. ЦЕГЛЮКОВ .- Մարդու ծագումը և նրա սկզբնական հարեները. "Центр" Sphera. 1911. № 1-3  
Բնագիտական թեորիայի արդի դրությամբ.
30. Происхождение животных и растений .  
Сборник под редакцией ЗЕРНОВА.

ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ:

ՔԱՐՏԵԶ N 1.

Դարվիճի թեորիայի սկզբունքներիցն է՝ արվեստա-  
կան ընտրութիւնը: Դարվիճը պարզում է, թե ին-  
չիցն է, վոր ընտանի կենդանիները և ազնվացրած բոյ-  
սերն այնքան բազմաձև են: Նախապատմական մարդն  
անգիտակցաբար տարեց տարի ընտրում էր իր համար  
կենդանիներից, բոյսերից լավ՝ իր տնտեսութեան հա-  
մար ոգտակար տեսակներ և նրանց բազմացնում:

Իհարկե վայրի կենդանիներից և բոյսերից է առաջ  
բերել իր կյանքի համար անհրաժեշտ ձևերը: Այժմ  
մարդն այդ ընտրութիւնը գիտակցաբար է անում,  
չեկավարվելով յերկու բնական որենքներով՝ փոփոխա-  
կանութեամբ և ժառանգականութեամբ: Համա-  
ձայն առաջնի՝ մեկ ծնողների սերունդն ամբողջո-  
վին հար ու նման չէ, միշտ լինում են անհատական  
տարբերութիւններ. ահա այդ անհատական հատկա-  
նքներից է ոգտվում մարդն ընտրութեան միջոցին:  
Սերնդե սերունդ ընտրելով վոր և է հատկանիշ՝ նա  
ավելի պարգայնում է նրան. ժառանգականութեան  
շնորհիվ հատկանիշները փոխանցվում են սերնդե սե-  
րունդ: Բարտեզի վրա տեսնում ենք արվեստական  
ընտրութեամբ առաջ բերած նոր կենդանական  
ձևեր: նկ. 1 - Բեննակիր ձի "պրիմյ Ուիլյամ", բարձրութ.  
5 ֆտ. 11 դմ. նկ. 2. Տաքսա շուն. նկ. 3. Ազնվացրած խոյ.



1206 H

15124

Նկ. 4. Լինկուճշիրի վոչխար. Նկ. 5. Յեղջրավոր պրաշաշ.  
Նկ. 6. Իսպանական աքաղաղ. Նկ. 7. Գառուդանի աքա-  
ղաղ. Նկ. 8. Մալայան աքաղաղ. (ըստ Ռոմանեսի).

**ՔԱՐՏԵՁ N2. Ազավներ:**

Նկ. 1. Փքված. Նկ. 2. Աիրամարգայիւ ա. Նկ. 3. Կար-  
ճակտուց ա. Նկ. 4. Ցեւայի ա. Նկ. 5. Փոստատար ա.  
Նկ. 6. Փոշավոր ա. Նկ. 7. Տորման. Նկ. 8. Աբեշու-աշավնի.  
Նկ. 9. 1/2 այրի ժայռի աշավնի. այս ձևը բոլոր աշավ-  
նիների նախահայրն էր:

Բնության մեջ ել որգանիվմները բազմաձև են  
դարձել շնորհիվ բնական ընտրութեան. բնական ըն-  
տրութեանը, համեմատաբար արհեստականի հետ, կա-  
տարվում է անգիտակցաբար և առանց նախամտա-  
ված նպատակի: Բնական ընտրութեանը գոյութեան և  
կռվի հետևանք է: Որգանիվմների միջև գոյութեան  
կռիվ է տեղի ունենում, բնութեանն ընտրում է նրանց,  
վորոնք լավ են համակերպված շրջապատ պայմաննե-  
րին. գոյութեան կռվի պատճառը նրանումն է, վոր  
որգանիվմները բազմանում են յնրկրաչափապես և  
պրոգրեսսիւայով (այսպէս՝ 2, 4, 8, 16, 32 և այլն),  
իսկ սնունդն ավելանում է թվաբանական պրոգրես-  
սիայով (այսպէս՝ 2, 4, 6, 8, 10, 12 և այլն): Սնունդը բո-  
լորին չի բավարարում:

**ՔԱՐՏԵՁ N3. Որգանիվմների բազմացման չափը և**

նրանց մի քանի տարվա սերունդը (յեթե սերունդն  
ամբողջովին պահպանվի):

- նկ. 1. Բազմապսճան համեմատութայուն . 2 - մի յօրիցորդը  
տալիս է 100 միլլիոն ձվիկ . 3 - ասկարեսը - 60 միլլիոն,  
Ե - պտերը - 14 միլ. սպոր . Ը - թառափը (կրեկային ձուկ)  
- 2 միլ.: նկ. 2. Փիղն իր կյանքի ընթացքում ունե-  
նում է 6 ձագ . 750 տարուց հետո մեկ փղի սե-  
րունդը կհասնի 19 միլլիոնի: նկ. 3. Ենկ բակտերիա մի  
որից հետո կունենա 17 միլլիոն սերունդ, իսկ չորս որ  
անց՝ սերունդի քանակը պիտի դրել 36 թվանշանով.  
նկ. 4. Ենկ ինֆուզորիան մի որվա մեջ դառնում է  
չորս, հինգ որ անց՝ կստացվի 1024: նկ. 5. Ծննդուկի  
տասը տարվա սերունդը կհասնի մինչև 10 միլլիոնի.  
նկ. 6. Հարինգը տալիս է 40.000 ձվիկ, Մահանը -  
- 200.000.

#### ՔԱՐՏԵԶ N4.

Բազմապսճում: Որգանիվմների փոխհարաբերութայունները:

- նկ. 1. Յենթադրենք խտուտիկի մի որինակը տալիս  
է 100 սերմ (կարող է ավելի շատ տալ). հաջորդ տա-  
րին կունենա - 10.000, իսկ տասը տարուց հետո՝  
ստացվում է հսկայական չափի սերունդ (մեկ՝ տասըն-  
ևութս զեռոներով). յեթե յենթադրենք, վոր ամեն  
մի խտուտիկի համար անհրաժեշտ է մեկ քառա.  
կուսի վերջուկ տեղ, այն ժամանակ յերկրի ցամաքը  
բավական չի անի խտուտիկի տասը տարվա

սերնդի համար հարկավոր կլինեն 15 անգամ ավելի տեղ. կո-  
տորակի ներքևի թիվը յերկրի ցամաքի չափն է (քառակու-  
սի վերջուկով): նկ 2. Դաշտային մանանեխի (*Sinapis arven-*  
*sis*) մի որինակը տալիս է 5628 սերմ, վորոմը (*Agrostes*  
*ma pithago*) - 1054, փաթաթուկը (*Convolvulus arvense*) - 400  
(թվերն ըստ Պորչինսկու): նկ 3. Հողի պարարտությունը վերոշ-  
չափով կապված է կատուների հետ (որգանիվմների փոխ-  
հարաբերությունների մի որինակ). առվույտը հողը պարար-  
տացնող բույս է. առվույտ շատ կլինի այն դեպքում, յեթե  
շատ յեղան իշամեղուները (առվույտը փոշոտող), սրանք  
ել շատ կլինեն, յեթե դաշտամկներ քիչ լինեն (մկները  
վոչնչացնում են միջատի բունն ու սերունդը), մկներ  
քիչ կլինեն, յեթե մոտակա գյուղերում կատուների թիվը  
շատ յեղավ:

...

Գոյության կռվում որգանիվմների մի մասը վոչնչա-  
նում է տեղի տալով լավ համակերպված որգանիվմնե-  
րին: Գոյության կռիվ տեղի յե ունենում կենդանիների,  
բույսերի, բույսերի և կենդանիների, որգանիվմների և  
բնության միջև: Գոյության կռիվը լինում է արյունա-  
հեղ, նկատելի և անարյուն, աննկատելի: Պահպանվում են  
այն ձևերը, վորոնք բնության պայմանների համապատաս-  
խան հատկանիշներ ունեն: Պահպանվում են ամենալավ  
համակերպված ձևերը (սրանք կարող են ֆիզիքապես լի-  
նել ուժեղ կամ թույլ): Որգանիվմների համակերպումն



ներ: նկ. 3. Իժի թունավոր ատամները վերևի ճնոտում (a):  
նկ. 4. Աարդի յեղջրային թունավոր ճնոտները: նկ. 5. Ճնոտ.  
ներից մեկը թունավոր պարկով: նկ. 6. Ռմբաձիգ բլեպ՝ պաշտ.  
պանվում է հեղուկ դուրս թափելով: նկ. 7. Կարիճի նեղ  
փորի ճայրին՝ թունավոր խայթոց: նկ. 8. Մեղուի խայ-  
թոցը, a. ատամնավոր փուշը: նկ. 9. Զրահակիր՝ մարմնի  
և գլխի գազաթի վրա յեղջրային վրասով:

ՔԱՐՏԵԶ N 8. Ահաբեկիչ ձևեր (նախազգուշացնող)  
և տիտիկրիա (նմանութուն):

նկ. 1. Հարսիա վինուլա (*Harpya vinula*) թրթուրը. a. Տան-  
գիստ դրուձյամբ, b. վախեցած՝ ահաբեկիչ դիրքով:  
նկ. 4. Բլապս (*Blaps mortisaga*) բլեպն ահաբեկիչ դիր-  
քով: նկ. 5. Աարդի ահաբեկիչ դիրքը (ըստ Նմիդտի, իսկ  
համաձայն Ռոմանեսի այսպիսի դիրք արուն ընդունում  
է եգին գրավելու համար): նկ. 2. a. Վոլուլեյելա  
Խաներ (*Volucella inanis*) նմանվում է խայթոց ունեցող  
պիճակին (b. *Vespa vulgaris*. ըստ Ռոմանեսի): նկ. 3. Թի-  
թուր (a) նմանվում է պիճակին (b) (Ուոլլետ): նկ. 5. Բլեպը  
(a) նմանվում է տիպին (b) (Ուոլլետ):

ՔԱՐՏԵԶ N 9.

Բույսերի համակերպման և պաշտպանողական միջոցները:  
նկ. 1. Փշեր: նկ. 2. Յեղինջի խայթոց մազիկը (a), մազի-  
կի գլխիկը (b): նկ. 3. Տերևների վրա յեղան մազիկները  
պաշտպանում են ջրի ուժեղ գոլորշիացումից: նկ. 4. Ակա-  
նի (*Dipsacus*, борщюк) ցողունի հանգույցներում

յեղան ջրաթափերը (զրի կարիքը բավարարելու համար):

նկ. 5. 6. Կալադիոնի (2) և խաշնդեղի (Rheum, рещенъ) տե-  
րեների կենդրոնախույս և կենդրոնաձիգ դասավորությունը  
նպաստավոր է - առաջին՝ հորիզոնական ձգված, յերկրորդի՝  
ուղղահայաց արմատները ջրելու համար: նկ. 7. Խտուտիկը  
(Taraxacum dens leonis) լեռնային վայրերում (2) և հովիտ-  
ներում (6):

Համաձայն եվուլուցիոն թեորիայի՝ որգանիվմները փոփոխ-  
վում են, մեկից առաջ է գալիս մի ուրիշ ձև: Բոլոր որ-  
գանիվմներն էլ ազգակցաբար կապված են: Այդ յերևում  
է մարմնի կառուցվածքի ընդհանուր նմանությունից և  
մասնավանդ ուղիմենտար գործարաններից: Ռուդի-  
մենտ նշանակում է վոր է ե գործարանի մնացորդ:

ՔԱՐՏԵ 2 N 10. Ռուդիմենտար գործարաններ:

նկ. 1. Կետի նախասայրերը չորքոտանի ցամաքի կեն-  
դանիներ են յեղել. կետի կմախքի վրա կան մնացորդ-  
ներ. 1. լողաթափի մեջ կան իսկական վոսկրային մատ-  
ներ (6) և առջևի վերջավորությունների մյուս վոսկրները.

2. հետևի վերջավորություններից՝ կոնք և ապրոսկր (2):

նկ. 2. Ավստրալյան անթեթ թռչուն կիվի (կամ Ապտերիքս)  
ուներեցել է թևավոր նախասայր. 2. - ուղիմենտար (մնա-  
ցորդ) թևեր: նկ. 3. Ոձերը վարգացել են մոռեսանման  
չորքոտանի սողուններից: Պիթոն ոձի կմախքի վրա  
կան յետևի վոսկրերի վոսկրային մնացորդներ (2. կմախ-

քի վրա. Ե.գրսից թեփուկների միջև յերևացող ճիւղան-  
ները): նկ.5. Կողացող անթև թռչուն Պինգվին, թևերի փո-  
խարեն - լողակներ, վորոնց կմախքից յերևում է, թե նրանք  
թևերի փոփոխութեան արդյունք են: նկ.4. Գիշատիչ թռչ-  
ունի (a) և պինգվինի (b) լողակի վոսկրային կմախքը:

ՔԱՐՏԵԶ N 11. Եվոլուցիայի սահմանափակման  
ապացույցներ:

նկ.1. Կաթնասունի ձվային բջիջը: նկ.2. Հիդրայի ամյոբա-  
նման ձվիկը: նկ.3. Կրային սպունգի (*Leuculmis echinus*)  
ձվային բջիջը՝ շարժման մեջ: նկ.4. Կատվի մատուցաշ ձը-  
վիկը շարժման մեջ (Ռոմանենս): նկ.5. Ֆորելի, նկ.5a. մար-  
դու ձվաբջիջները: նկ.6. Ամյոբա.

Համաձայն բիոգենետիկ որոնքի՝ ոնտոգենեզիս  
(անհատի սահմանային վարգացումը) ֆիլոգենեզիայի  
(տոհմային վարգացման) համառոտ կրկնութունն է. այդ-  
նչանակում է, վոր տվյալ կենդանու սահման իր վար-  
գացման ժամանակ, վորոշ ֆազերում, հիշեցնում է այս-  
կամ այն կենդանական ձևը (նախահայրերին): Ձվային  
բջիջն ընդհանուր գծերով հիշեցնում է միաբջիջ ամյո-  
բան: նկ.7. Սահմի մորուշա շրջանը նման է բջջա-  
կոյտաձև որգանիվմներին՝ պանդորիկա (նկ.12) և սպուն-  
գիլոմորին (նկ.13): նկ.8. Բշառտուշա (փամփշտի) շր-  
ջանը (a - արտաքուստ, b - կտրվածքը) հիշեցնում է փամ-  
փշտաձև վոլվոքսին (նկ.14): Գաստրուլայի շրջաններ  
(նկ.9. Ինչպես է առաջ գալիս գաստրուլա շրջանը).

9a. Գաստրոֆիլեմա (*Gastrophysema* . անաչիներից), 10a. Հոր-  
վանոտանու (*Nauplius*), 10b. Փափկամորթու (*Limnaeus*),  
11. Վոչնաշարավորի (ստորին ձև՝ նշտարաձուկ, *Amphio-  
xus*). (նկ. 9-11. Ռոմանեսից): նկ. 15. Այժմ ել գոյութայուն  
ունեցող գաստրոկաձև որգանիվմ՝ Գրոֆիլեմա պրիմոր-  
դիալե (ըստ Հեկկելի), նկ. 16. Գաստրոկա շրջանը հիշեցնող  
հիդրան:

### ՔԱՐՏԵԶ N 12.

Սաղմի պարգայման ավելի ուշ ֆազերը:

նկ. 1. Զուկ. 2. Սալամանդրա. 3. Կրիա. 4. Հալ. 5. Խոլ  
6. Հորթ. 7. Ճագար. 8. Մարդ. a - քիմուխտային ճեղքեր  
(Ռոմանեսից):

### ՔԱՐՏԵԶ N 13.

Սաղմնարանական ապացույցներ:

նկ. 1. Գորտի շերտփուկը ձկանման է և շնչում է քի-  
մուխտներով (գորտի նախասայրերը ձկներ են յեղել):  
նկ. 2. Տրիտոնի շերտփուկը (թրթուրը) նույնպես քիմուխտ-  
ներ ունի: նկ. 3. Կոչալուչի (Տափակաձուկ. *Kamohala*) աչ-  
քերի աննորմալ դիրքը (յերկուսն իրար կողքին՝ ձկան  
մեջքի կողմում. ձուկը տափակ է մեջքի և փորի կող-  
մերով). a. չափասաս ձուկը. b. նրա թրթուրի պարգա-  
յումը (սքեմա) ցույց է տալիս, վոր ձկան նախասայ-  
րերի աչքերը նորմալ դիրք ունեյին (թրթուրի վրա՝  
պարգայման ընթացքում է, <sup>հավիտ</sup>ինչպես նորմալ դիրքը  
փոխարկվում է աննորմալ դիրքի: նկ. 4. Նովարադի-

(Lepas) ինչ կենդանի լինելը պարզվում է սառմը-  
 նային վարձայման վրա. զ. Նովաբադիկ՝ ճանկված մի քա-  
 նի մասերից բաղկացած կրային խեցիով (դրա հիման վրա  
 նրան սխալմամբ փափկամորթու տեղ եյին ընդունում).  
 անշարժ կյանք է վարում ջրերում՝ վոր և է լողացող բա-  
 նի ամրացած. Ն. կենդանու թրթուրը շատ է նման խե-  
 ցեմորթների թրթուրին. Ը. - վարձայման հետագա շր-  
 ջանը : նկ. 5. Աերամի (և ուրիշ թիթեռների) վարձայման  
 վրա յերևում է, վոր միջատների նախահայրերը վորդերն  
 են յեղել. զ. - թիթեռը. Դ. - ձվիկներ. Ը. - վորձանման թր-  
 թուրը. Ժ. - կոկոն. Ե. - հարսնյակ :

**ՔԱՐՏԵԶ N 14.**

Եվոլյուցիայի հնեաբանական ապացույցներ :

Ցերկիրն իր սառման ժամանակից սկսած շատ փո-  
 փոխությունների յե յենթարկվել. փոխվել են ցամաքները,  
 ջրերը, յերկրակեղևն ավելի ու ավելի հաստացել : Զուգըն-  
 թ յպարտ փոփոխվել է և որձանական աշխարհը : Վա-  
 ղեմի անցյալներում յեղած որձանիվմների մնացորդ-  
 ներ (կմախքներ, քարածոներ, տպագրված հետքեր լեռ-  
 նային տեսակների վրա) գտնված են և գտնվում են  
 յերկրակեղևի տարբեր շերտերում : Գտնված մնացորդ-  
 ների վրա յերևում է, թե կյանքը վարձացել է աս-  
 տիճանաբար՝ նախ պարզ ձևերը, ապա բարդ. որ-  
 ձանիվմները միլիոնավոր տարիների ընթացքում փո-  
 փոխվել են :

- նկ. 1. Տրիլոբիտ (հողվածոտանիներից) - պալեոպոյան (Տիւ  
 կենդանական) դարաշրջանի : նկ. 2. Զրահապատ ձուկ  
 (Պալեոպոյ) : նկ. 3. Հսկայական փափկամորթ - ամֆոնիտ :  
 Մեզոպոյան (միջին կենդանական) դարաշրջանի սողունները :  
 նկ. 4. Մոպոպավր (յերկարուձայունը մինչև 75 ֆտ) : նկ. 5. Պլե-  
 սիոպավր (40 ֆտ) : նկ. 6. Բրոնտոպավր (60 ֆտ) : նկ. 7. Պտերո-  
 դակտիլ (ըստ տարածված թևերի, յերկարուձ. 25 ֆտ). Ֆրո-  
 չոչ սողուն՝ Ֆաղանթանման թևերով) : նկ. 8. Իգուանոզոն  
 (20 ֆտ) : նկ. 9. Իխտիոպավր (մինչև 40 ֆտ) : (ըստ Գյոտլինսոնի) :

ՔԱՐՏԵԶ N 15.

Հնեաբանական (պալեոնեոզոոգիական) ապացույցներ) :

- նկ. 1. Արխեոպտերիքս (նախաթռչուն, սողուն-թռչուն) .  
 թռչունի նման է, մարմինը և թևերը փետրածածկ.  
 ունի սողունային հատկանիշներ՝ թևերի վրա առջևի  
 վոտքերի մնացորդներ (ճիրանավոր ապատ մատներ), ճնոտ-  
 ների վրա՝ ատամներ. պոչը մինչև վերջը վոզներից է  
 կազմված, պոչի փետուրները կոպ-կոպ են ամրացած  
 վոզներին (a) : նկ. 2. Յեղջերուի յեղջուրների յերկրաբա-  
 նական պատմությունը. տարբեր ժամանակների յեղջե-  
 րուների յեղջուրները՝ սկսած միոցենից (տես քարտեզ 23).  
 a. b. *Cervus dicrocerus* (Յերվուս դիկրոցերուս), c - *Cervus*  
*matheronis* (Յեր. մաթերոնիս), d. *C. pardinensis* (Յ. պարդի-  
 նենսիս), e. *Cer. isiodorensis* (Յ. իսիոդորենսիս), f. *Cervus*  
*Sedgwicki* (Յ. Սեզվիկի) : նկ. 3. Արդի յեղջերուի յեղջուր-  
 ների զարգացումը : (Ռոմանենսից) : նկ. 4. Միասմբականի

ձին պարգայել է հինգամտնանի կենդանիներից. լեռնա-  
 թն շերտերում գտնված են մի շարք միջակա մնացորդ-  
 ներ. I. առջևի վոտքը. II. հետևի վոտքը. III - ճիկ և բա-  
 րուկ. IV - մեջ ու փոքր վոլոգ. a. Որոհիպպուս (Ororhippus -  
 եոյենից), b. - Մեզոհիպպուս (Mesorhippus - ստորին միո-  
 պենից). c. - Միոհիպպուս (Miolorhippus - միոյեն), d. - Պրո-  
 տոհիպպուս (Protolorhippus - ստորին պլիոցեն). f. Ջի (Equus -  
 չորրորդական և արդի շրջան). g. - սկզբնական  
 հինգամտնանի նախահայր՝ Փենակոդուս (Phenacodus -  
 աշվենի չափ). նրա գանգը և առջևի վոտքը. սրան  
 համարում են միաժամանակ բոլոր սմբակավորների  
 նախահայր:

ՔԱՐՏԵԸ N 15a.

Միջակա (переходные) ձևեր:

նկ. 1. Ըալանոգլոսսուս քիմոլիտներով զնչող վորդ.  
 քիմոլիտային կենդանիները բաց են, ինչպես մի քանի  
 ստորին ձկների սրտ. այդ շնչառության գործարանը  
 պարգանում է աշիքների առջևի մասում: Այդ որ-  
 գանիցմից յերևում է, վոր ձկների (ապա և բոլոր  
 վողնաշարավորների) նախահայրերը վորդերն են յեղել:

նկ. 2. Նչտարաձուկ (Ամֆիոքսուս. Amphioxus). a - նյարդային  
 խողովակ. b - մեջքի լար (Ֆիկնալար, chorda): Ամֆիոք-  
 սուսն ամենաստորին վողնաշարավորն է, նրա նյար-  
 դային խողովակը և մեջքի լարը (Ֆիկնալարը) պար-  
 գայած դրոպոյամբ՝ հիշեցնում են վողնաշարավորների

սաղմի վորոշ շրջանի նյարդային սիստեմի և վոզ-  
 նաշարի դրուժյունը: Չունի գլուխ: նկ. 3. Ավելի բարձր  
 աստիճանի վոչնաշարավոր՝ քարալեզ (Բոլորաբերան ձկ-  
 ներից). ունի կոլոր բերան և յեղջրային ատամներ.  
 2. քիմուխտային խորշեր. ունի գլուխ՝ գլխուզնջով. վոչնա-  
 շարի փոխարեն թիկնալարն է (chorda): նկ. 4. Շնաձուկ-  
 կրճկային կմախքով. կրճկային ձկները վոսկրային ձկներից  
 առաջ են զարգացել: Բոլոր վոչնաշարավորների (և մար-  
 դու) սաղմի կմախքը զարգացման վորոշ շրջանում -  
 կրճկային է լինում, ապա աստիճանաբար վոսկրանում է:  
 Յերկշունչ ձկներ. նկ. 5. Յերատոդուս (Ceratodus) և  
 նկ. 6. Պրոտոպտերուս (Protopterus annectens): Արանք  
 քիմուխտաշունչ ձկների և թոքաշունչ կենդանիների  
 միջև յեղան միջանկյալ ձկներն են: Թոքերն ըստ  
 յերևույթին ձկների լոշափամփշտից են զարգացել:  
 Յերկշունչները շնչում են քիմուխտներով և թոքերով  
 (չույ՞գ կամ կենտ փամփուշտներ). թոքերը հաշորդակ-  
 ցվում են աշիքի առջևի մասի հետ, նրանց ներսի  
 պատը ծալքավոր է և հարուստ արնատար անոթ-  
 ներով: Ջրերում շնչում են քիմուխտներով, իսկ յերբ  
 ջրերը զամաքում են՝ թոքերով:

Ձվաճիւններ (ստորին կաթնասուններ). նկ. 7. Բադակը-  
 տուց. նկ. 8. Եխիդնա. սրանք բնակվում են Ավստրա-  
 լիայում, ամենաստորին կաթնասունները յեն. սրանց  
 վրա ճշտվում է այն փաստը, թե կաթնասունները

սողուններից են պարգայել: Ձվաձիւների սողունային  
հատկանիշներն են՝ ձու յեն աճում, ունին կշռակ,  
այսինքն՝ մի ընդհանուր անցք, վորով դուրս են բեր-  
վում միպասեռական և սննդառական արտաթոր-  
ութիւնները (իսկական կաթնասունների մոտ, սկսած  
պարկավորներից - անքերն առանձնացած են):

ՔԱՐՏԵԸ N 16 . Ուղեղ և թոքեր.

Նկ. 1. Ուղեղների համեմատութիւն . a, ծ. - քարալեզի  
ուղեղ (վերևից և կողքից). c - գորտի, d - կոկորդիլոսի.  
e - թռչունի, f. - ճագարի : Նկ. 2. Շան ուղեղ : Նկ. 3. Մար-  
դու ուղեղ : Նկ. 5. Մարդու սաղմի ուղեղն ընդհանրա-  
պես նման է ձկան ուղեղին : Նկ. 4. Թոքերի պարգայ-  
ման սքեման . a - աշիքները սաղմնային վիճակում.  
b. - կենտ, ապա զույգ յելուստներ, վորոնք հետագա-  
յում թոքեր են դառնում. c - շնչափող . (ըստ Վիդերս-  
հեյմի): Նկ. 6. Վոսկրային ձկան կտրվածքը յերկա-  
րութեամբ . յերևում են լողափամփուշտը (S) և նրա  
աշիքին միացնող խողովակը (a. - ող-անցք), b. - սննդ-  
ափող (ըստ Էեխե):

...

ՄԱՐԴՈՒ ՑԱԳՈՒՄԸ:

Մարդն էլ կենդանական ճագում ունի. նա  
առայժմ սովեճաբարձր որգանական ձևն է և պար-  
գայել է ամենաբարձր կենդանի՝ կապկից հետո:  
Ուրեմն մարդու նախասայրերի շարքում յեղել են

բազմատեսակ կենդանիներ, միաբջջանի որդանիպոից  
ակսած: Մարդու կենդանական ծագումը յերևում է  
նրա մարմնի կառուցվածքի վրա, սաղմի զարգացման  
վրա. բայց ամենալավ ապացույցներն են մարդու մար-  
մնի վրա և նրա մեջ նկատվող մի շարք կենդանա-  
կան գործարանների մնացորդները. այդ մնացորդները  
կոչվում են ռուդիմենտներ: Դրուդիմենտար գործա-  
րանը բոլոր մարդկանց վրա յեղ նկատելի յե, բայց  
յերբեմն հազվագյուտ մարդկանց մեջ յերևան են գա-  
լիս մի շարք ուրիշ կենդանական հատկանիշներ. այս  
դեպքը կոչվում է շատաձիչձ (վերադարձ դեպի  
նախահայրը), իսկ հատկանիշն - ատավիստական:

**ՔԱՐՏԵԶ N 17.**

Դրուդիմենտար գործարաններ:

Նկ. 1. Մարդու (a) և շիմպանզեյի (b) կոնքոսկրները. e.- պո-  
չուկ (նախահայրերի պոչի վոսկրային մնացորդ):

Կույր աջիքը. նկ. 2. որանգ-ուտանի, նկ. 3. ջափահաս  
մարդու. նկ. 4. նորաճին յերեխայի, նկ. 5. ագուտի-կրծոչի.  
a - հաստ աջիք, b - բարակ աջիք, c - կույր աջիք, d - վոր-  
դանման հավելված (ըստ Է. Է. Է. Է.): նկ. 6. Ջափահաս մար-  
դու (e), մարդկային սաղմի (b) քիմքային գլանակները  
(Յարտառ). այս գլանակները մնացորդ են կենդանա-  
կան ուժեղ զարգացած քիմքային գլանակների (իսկ  
ոչների քիմքի վրա կան նույնիսկ ատամներ). լավ  
զարգացած են գլանակները, որինակ, կպակապկի

(мартышка) քիմքի վրա (a. Կեխե): նկ. 7. Մարդու ականջի վրա ականջակոնքը շարժող մկաններ (a): նկ. 8. Աչքի թարթչային թաշանթը (мигательная перепонка). Մարդու աչքում (a. \* վորպես մնացորդ «կիսաշուսնաձև ծալք» անվան տակ). b - ձիու աչքում. c.- բուի, d.- կրիայի, e.- կապկի: նկ. 9. Դարվիչյան բշտիկ՝ մարդու ականջակոնքի արտաքին յեզրի ներս ընկած ծալքի վրա (a). այդ բշտիկը կենդանական սրածայր ականջի գագաթի մնացորդ է. b.- մարդու և կենդանական ականջների համեմատության. a - մարդկային ականջ, b - մական կապկի, c - ստորին կաթնասունի (սքեմաներ):

ՋԱՐՏԵՁ N 18.

Ատավիստական նշաններ:

նկ. 1. Պոչ. նկ. 2. Մարդու (a) և շիմպանչեյի (b) ձեռքի մազերի ուղղութայունը. բազուկի վրա - դեպի ներքև, կանգունի վրա՝ դեպի վեր. կապիկների համար նշանակություն ունի .անձրև ժամանակ նրանք պաշտպանվում են ձեռքերը գլխի վրա ծալելով. այս դեպքում անձրևաջուրը չի պահվի մազերի արանքներում (ինչպես կլիներ, յեթե մազերի ուղղութայունը հակառակ կողմ լիներ): նկ. 3. Կակատոսկրի կար. a - մարդու նորմալ վոսկրը. b. Կակատոսկրը կարով (չոյգ վոսկրներ, կենդանիներից ժառանգված: նկ. 4. Հավելյալ չոյգ ստիճաններ մարդու վրա (a, b): նկ. 5. Կլի ֆիստուլա (քիմուստային ճեղքի մնացորդ): նկ. 6. Կնոջ սեռական անցքի

(Տեղտոցի) և աղիքի հաղորդակցությունը (ստացվում է այս պես կոչված «կլոակ» նմանություն միանցքավորների (չվաճին բաղակտուցի) կլոակի (ընդհանուր առաջ միզասեռական և աղիքային արտաթորանքների համար): նկ.5. Վլի ֆիստուլա (քիմուխտային ճեղքի մնացորդ): նկ.7. Մարդու կմախքի վրա 13-րդ պոչի կողերը՝ միացած վլի վերջին վողնին. գիբրոնն ունի 14 պոչ, գորիլլան և շիմպանզեն - 13 պոչ, որանգ-ուտանը մարդու նման՝ 12 պոչ:

**ՔԱՐՏԵԶ N 19.**

Ատավիստական նշաններ:

- նկ. 1. Մարդու կոկորդի մեջ՝ մորգանյան փորուկներ
- (2). սրանք՝ մի քանի կապիկների մոտ յեղևն ձայնական պարկերի մնացորդներ են: նկ.2. Վերուշնային հավելված՝ եպիֆիլը, վորպես յերրորդ աչքի (գագաթի) մնացորդ: նկ.3. Վարանուս մողեսի յերրորդ՝ գագաթի աչքը: նկ.4. Մողեսի գլխի կտրվածքն յերկարությամբ. ա. գագաթային աչք. 6 - ուշնի: նկ.5. Մազոտ մարդ:
- նկ.6. Վեցամսական մարդու սաղմի դեմքը՝ սաղմնային մազային ձաճկոցով (ոսքոս): նկ.7. Հետոպքի կողմը պուլանման մազային փունջը:

**ՔԱՐՏԵԶ N 20.**

Մարդու մոտավոր նախահայրերը:

նկ.1. Պիթեկանթրոպուս (*Pithecanthropus erectus*) (Դյուբուայի Յավա կղզում արած գյուտը 1891 թվ.) ա. գանգի խուփը

(крышак) վերևից , Ն- կողքից . Ճ.- ապդրոսկրը . Ը.- գործիչայի  
և Ը. մարդու ապդրոսկրը . Գ. պիթեկանտրոպուսի սեղանա-  
տամբ : նկ. 2 . Պիթեկանտրոպուսի գանգի ամբողջական  
յենթադրական տեսքը : նայած ապդրոսկրին՝ պիթեկան-  
տրոպուսն ուղղադիր քայլվածք ուներ (մարդկային հատ-  
կանիչ) . գանգախուսի ճակատակրը և ճոճակոսկրը  
թեք են , վերունքային կամարներն առաջ ընկած (կապ-  
կային հատկանիչներ) :

Նեանդերթալյան մարդ . սրա վոսկրային մնացորդներ ,  
նույնիսկ ամբողջական կմախքներ շատ են գտնված  
և տարբեր յերկրներում . առաջին անգամ գտան Գեր-  
մանիայում 1856 թվ . Դյուսելդորֆ քաղաքի մոտ նեան-  
դեր գետի հովտում . 1899 թ . Կրոպիայում , Կրուպին ա-  
վանի մոտ , 1908 թ . Լա Շապելլ - Ա - Սան քարայրում և  
1909 թ . Լե - Մուստիե քարայրում (Ֆրանսիա) , 1887 թ . Ապի-  
մոտ (Բելգիա) , 1918 թ . Պյատիգորսկում . Պոդկումոկ գե-  
տի հովտում (Ռուսաստան) :

նկ. 3, 4 . Նեանդերթալյան մարդու գանգի խուսիչ  
կողքից և առջևից : նկ. 7 . Լա Շապելլ Ռ - Սան քարայ-  
րում գտնված գանգը :

նկ. 6 . Պիլտոնուսի մարդ . գտնված են՝ ստորին ծը-  
նոտը և գանգոսկրների մնացորդներ 1911 թ . Պիլտոնու-  
սում (Անգլիա) . Ճնոտը կապկային է , առանց կղակի  
(թեքված է յետև) , միակ ժանիքը դուրս ցցված . գան-  
գը ընդհանրապես մարդկային գանգի ծավալի

չափն ունի (1300-1500 խ. սնտ):

Նկ. 5. Հեյդելբերգի ճնոտ (գտնված 1908 թ. Հեյդելբերգում). ճնոտը կապկային է, բայց ատամները չունի մարդկային:

Նկ. 7. Բրոկեն Խիլի գանգ (Ռոդեզիայի մարդ). գտնված է Ռոդեզիայում (Հարավ. Աֆրիկա). նեանդերթալյան տիպի մարդ, բայց գանգի ընդհանուր ձևով, ատամներով ավելի յե նման իսկական մարդուն (ավելի մոտ նախահայր):

**ՔԱՐՏԵԶ N 21**

Մարդու նախահայրերը (սքեմաներ):

Նկ. 1. Գանգի համեմատական ծավալը. նեանդերթալի - 1400 խոր. սանտ., Պիթեկանտրոպուս - 850-900 խ. ս., մարդանման կապիկների (620-ամենաշատը), ավստրալիացու - 1238 (ըստ կրաուպեյի), յեվրովացու - 1360-1550, Վեդդացու - 960.

Նկ. 2. Ինչ տեղ է բռնում Պիթեկանտրոպուսը (կապիկ մարդը) պրիմատների շարքում. a.- ըստ Դյուբուայի. b.- ըստ Կիլսի. c.- ըստ Բուլի. Pit- պիթեկանտրոպուս. Antropoid.- մարդանման կապիկներ, cercopithecus - կզակապիկներ: Նկ. 4. Կիլսի սքեման - մարդկային սեռը և նրա նախորդները. a.- պիթեկանտրոպուս. b.- Հեյդելբերգի մարդ, c.- նեանդերթալյան մ., d.- Պիտոդաունի մ., e.- պրիմատների մարդկային ճյուղը. f. դեպի մարդը: Միոցենից (յերրորդական շրջան) մինչև

Մեր ժամանակն ըստ Կիլիսի անցել է մեկ միլիոն  
800 հազար տարի (Անուշիթ) : Նկ. 3. Կլամաչի սքեման :

### ՔԱՐՏԵԶ N 22

Դարվիճիկի լրացումը :

Դարվիճն էլ իր ժամանակին սակ է այն մասին,  
վոր նոր հատկանիշները կարող են և թռիչքային  
զարգացմամբ առաջ գալ (մուտայիա), բայց վորով-  
հետե փաստերի թիվը շատ աննշան էր, յերկար  
կանգ չառավ այդ յերեույթի վրա : Մուտայիանե-  
րի յերեույթի վրա մատնանշեց ոռոս գիտնական  
Կորեինսկին, սրանից հետո այդ հարցն ավելի ման-  
րամասն և գործնականորեն լուսաբանեց հոլլան-  
դացի բուսաբան Դե-Ֆրիվը . համաձայն Դե-Ֆրիվի  
գիտողութունների՝ մի տեսակից մի ուրիշը վոչ  
թե աստիճանաբար է զարգացել, յերկար տարի-  
ների ընթացքում, այլ կարճ ժամանակում, թռիչք-  
ների միջոցով : Համաձայն Դարվիճիկի որգանիվա-  
ների փոփոխականութունը կատարվել է և աստի-  
ճանաբար և թռիչքներով :

Դե-Ֆրիվի փորձերը . Նկ. 1. Ենոթերա Լամարկիա-  
նա, տիպիք . սկզբնական ձևը . սրա մուտայիաները .  
Նկ. 2. Հսկայական ենոթերա (*Oenothera gigas*) . Նկ. 3. Կար-  
մրայերակավոր ենոթերա (*Oenothera rubrinervis*),  
Նկ. 4. Լայնատերև ենոթերա (*Oenot. lata*) . Նկ. 5. Գծավոր  
ենոթերայի տերևը (*Oenoth. sublinearis*) :

Տոուերի փորձերը տերևակեր կարսողիլի բլեղի վրա.

նկ. 6 Տասնմեկգլխավոր բլեղ (*Leptinotarsa decemlineata*) հիմնական ձև (a). նրա մուտայիան (b).

նկ. 7. Տասգլխավոր կ. բլեղ. c. հիմնական ձև. d. e. նրա մուտայիաները:

### ՔԱՐՏԵԶ N 23.

Յերկրաբանական դարաշրջաններ և շրջաններ:

Կենդանական այս կամ այն ձևի հայտնության և ուժեղ վարգայման (լայն գծեր) ժամանակը.

1. Կրճկային ձկներ. 2. Գանոյիդներ. 3. Թոշային ձրկներ. 4. Վուկրային ձկներ. 5. Պոչավոր յերկկենցաղներ. 6. Անպոչ յերկկենցաղներ. 7. Առչուններ. 8. Բարչուններ. 9. Միանցքավորներ. 10. Բարձր կախնասուններ. 11. Մարդ. (ըստ Է. Եխեյի):

### ՔԱՐՏԵԶ N 24.

Դարվիճիկ. (սքեմա կրկնառնոթյան համար):

— արև —



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

Ծ. ԳԱՔՐԻԵԼՅԱՆ

Հ. Գ. Համարյարանի դասախոս.

# ՔՍՏԵԶՆԵՐ

ԵՎՈԼՈՒՑԻՈՆ ԹԵՈՐԻԱՅԻՑ.

*~\*~*

Таблицы по Эволюционной  
теории. Составил лектор  
Гос. Университ. Армении  
Р. ГАБРИЭЛЯН.

Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԱՊԱԿԵՏԻՊ N 1927.

== ՅԵՐԵՎԱՆ ==









1.



2.



3.



5.



4.



6.



7.




7.



8.

Cyprinus carpio





f. 1



f. 2

750  
109 mln.

990  
= 1

f. 3

100  
108 mln.  
360  
360



f. 4




f. 5.

100 - 2  
5 - 0024

1000 - 100 mln.  
5




f. 6



























































1. 2. 3. 4. 5. 6. 7. 8.







s.









1.



2.



3.



4.



5.



6.



7.






8.






9.












































①










AFRICAN  
AUSTRALIAN  
MONGOLIAN  
EUROPEAN



③

④



























No.	Plant	Insect	Remarks	Date
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				
14				

СХЕМА ГЕОЛОГИЧЕСКИХ ПЕРИОДОВ.

ЭТРУСЦИЦЦЦЦЦЦ ЦРЦЦЦЦЦЦ ЦРЦЦЦЦ





Handwritten text in the right margin, including a vertical column of numbers and several lines of illegible text. The numbers appear to be 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100.

— P U R S T E Z N E R I    Յ Ա Ն Կ —

1. Արվեստական ընտրութիւն:
2. Աղավնիներ:
3. Որգանիւմների բազմացման շափը:
4. Բազմացման շափը բուսական աշխարհում:
5. Պաշտպանողական (հովանավորող) գունավորում:
6. Պաշտպանողական ձևեր:
7. Պաշտպանողական պենքեր:
8. Ահաբեկիչ ձևեր: Դիմակավորում (միմիկրիա):
9. Բոյսերի համակերպման միջոցները:
10. Ռուդիմենտար գործարաններ:
11. Սաղմնաբանական ապացոյցներ:
14. 15. Հնէաբանական ապացոյցներ:
- 15a. Միջակա ձևեր:
16. Ուղեղների համեմատութիւն:
17. Մարդու ռուդիմենտար գործարանները:
18. 19. Ատավիտական նշաններ:
20. Մարդու մոտավոր նախահայրերը:
21. Մարդու նախահայրերը: (սքեմաներ):
22. Մուտացիոն թեորիա:
23. Ցերկրաբանական ապացոյցներ:
24. Եվոլուցիոն թեորիա (սքեմա կրկնողութեան համար):











(in)

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0068425

ЦЕНА

III  
0/3021